ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ (XVII—XVIII դդ.)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Զմյուռնիայում հայ գաղթավայրի կազմավորումից դեռ շատ առաջ հայ վաճառականները ավանդական կապեր ունեին փոքրասիական նավահանգիստների հետ։ XII—XIII դդ. և դրանից հետո Վենետիկի ու Ջենովայի առևտրի ընդլայնումը բյուզանդական պետությունների տրանզիտային ուղիներում խթանեցին նրանց առևտուրը նաև արևելքի հետ։ Հայ վաճառականների գործունեությունը հաստատուն էր դառնում բուն Հայաստանի քաղաքների առևտրահանգուցային դերի շնորհիվ. այստեղ ձգվող ճանապարհները տանում էին հյուսիս՝ Տրապիզոն և Կ. Պոլիս, սրանց վրայով՝ սևծովյան այլ նավահանգիստներ, և մյուս կողմից՝ տարածվում դեպի Սև և Միջերկրական ծովերի միջև ընկած առևտրական ուղիները։ Այս ժամանակաշրջանում հայ առևտրականները մշտապես շփվում էին լեվանտի առևտրական կենտրոնների հետ, որտեղ «սելջուկյան արշավանքներից հետո առաջացել էին հայկական գաղութներ»[1]։ XIII դարում ինչպես Կ. Պոլսում և Վենետիկում, Զմյուռնիայում ևս իրենց գաղթակալությունն էին ստեղծել ղրիմահայ վաճառականները[2]։ Վենետիկի և Ջենովայի առևտրական գործառնությունների ոլորտում Զմյուռնիան արևելքի և արևմուտքի ապրանքափոխանակության կարևոր հանգուցակետն էր։ Հայ վաճառականները Էգեյանի մատույցներն էին հասնում Արևելյան Հայաստանի ամենատարբեր շրջաններից՝ տեղափոխելով փոքրասիական տնայնագործական արտադրանք և հումք։

Նիկեայի կայսրության և դրան հաջորդած փոքրասիական բեյություններ-ի ժամանակաշրջանում Զմյուռնիան Կ. Պոլսի, Տրապիզոնի և Այաշի հետ միասին փոքրասիական կարևոր նավահանգիստներից մեկն էր[3]։

XIV դարում առևտրատնտեսական որոշ դեր ուներ նաև Զմյուռնիային կից Մանիսա քաղաքը, որին տիրում էին օսմանյան թուրքերը։ 1352 թ. նրանք Ջենովային տրամադրեցին տեղի շիբի արդյունահանման մենաշնորհը, որի հետևանքով ջենովացիները ընդլայնեցին եվրոպական տեքստիլ արդյունաբերության հումքային մատակարարման շրջանակները[4]։ Եվրոպական առևտրականների հետ հայերի համագործակցության մասին է վկայում այն, որ նրանք գտնվում էին թուրքերի դեմ արշավանքի պատրաստվող Կլիմենտ VI պապի շրջապատում։ Այդ արշավանքին մասնակցեցին Վենետիկը, Ջենովան և Կիպրոսը։ 1346 թ. գրված մի մաշտոցի հիշատակարանում արշավանքի նախապատրաստությանը ականատես հայ գրիչը նշում է. «Այլ որպէս և ոյր աղագաւ զայն կարգս գրեցի, վասնզի յառաջ Գ ամաց զի Կլեմենդոս պապն Վեցերորդն զիշխան ոմն Իմպերտ անուն և մականուն տօֆին, կոմս Վիէնիոյ արարեալ և կարգեալ գլխաւոր ընդդէմ թուրքանց ի վանումն նոցա և յղեաց ի քաղաքն Զմիւռնիոյ լիկեացոց։ Եւ իմ յայնժամ տեսեալ զկարգ առնողութեանն գրեցի զստորագրեալս արարողութիւնն»[5]։

---

1 Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Երևան. 1952, էջ 166։

2 Վ. Ա. Միքայելյան. Ղրիմահայոց պատմություն. Երևան, 1989, էջ 69։

3 Ա. Ալպոյաճյան. Պատմություն Եվդոկիո հայոց. Կահիրե, 1952, էջ 247։

4 H. Inalcik. The Ottoman Empire. 1300—1600. New York—Washington, 1973, p 134.

5 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ (կազմ. Բ. Սարգիսյան, Գր. Սարգիսյան). հ. Գ. Վենետիկ, 1966, էջ 358։

Դաշնակիցների նավատորմը լողաց դեպի Այտընի էմիրություն և տիրեց Զմյուռնիայի մեծ մասին, որ տևեց մինչև Լենկթեմուրի կողմից քաղաքի գրավումը (1402)։ Այտընի բեյության դեմ այս զինակցությունը ցույց է տալիս Զմյուռնիայի կարևոր նշանակությունը միջազգային ապրանքափոխանակության ասպարեզում։ Այդ նշանակությունը պահպանվեց և առավել ընդլայնվեց XIV—XV դդ. և հետագայում։ Դրան մի հայտնի չափով նպաստեց Միջերկրական ծովի ասիական նավահանգիստների դերի նվազումը[6], որի հետևանքով առանձնապես աշխուժացան փոքրասիական քարավանային ուղիները, որոնք տանում էին դեպի Կ. Պոլիս և Զմյուռնիա։ XVI դարում միջերկրածովյան առևտրում Վենետիկի թուլացումը պետք է փոխհատուցվեր Սև և Էգեյան ծովերում եվրոպացիների հետ առևտրի մեծացումով, որից դարձյալ շահեցին այդ նավահանգիստները[7]։

XV դարում եվրոպական մանուֆակտուրային արտադրությունը Թուրքիայում ուղիներ էր հարթում տեղական արտադրության մրցունակության մի որոշ առկայության պայմաններում։ Եվրոպական թավիշը և մահուդը, առանձնապես անգլիական մահուդը, Բրուսայի շուկայում փոխանակվում էին տեղական արտադրանքի հետ[8]։ Հետագայում արագորեն զարգացող իտալական, անգլիական, ֆրանսիական և հոլանդական արտադրությունը լևանտի առևտրահրապարակը գնահատելու էր գերազանցապես հումքի տեսակետից։ Հումքի հարաճուն պահանջարկը նշանակալի եկամուտներ էր խոստանում այն անմիջականորեն արտադրության վայր տեղափոխելու գործում։ Այս բեկումն էր պատճառը, որ փոքրասիական ներքին առևտրին քաջատեղյակ հայ առևտրականները XVI դարի կեսերին դուրս էին գալիս Զմյուռնիայից և ծովային ուղիներով հումք (բամբակ, մետաքս) էին հասցնում եվրոպական երկրներ։ XVII դարում ավելի կարևոր դարձավ Զմյուռնիայի՝ առևտրական հանգուցակետի դերը։ Ջալալիների ապստամբության ջախջախումից հետո Զմյուռնիա այցելած Սիմեոն Լեհացին նկարագրում էր այդ նավահանգստի հարաշարժ առօրյան. «Եւ անտի (Մանիսայից—Ա. Խ.) կէս օրն հասաք Իզմիր քաղաքն Նիկողայոսի։ Եւ սա էր ծովու եալու մեծ սկալայ, որ Ստամպօլա, Մսրա, Վանատիկու, Սարըղու և այլոց կէմիք կու խաղային և բազում ֆռանկք և հոռոմ կային անդ»[9]։

XVI—XVII դդ. զմյուռնարնակ, ինչպես և եկվոր հայ վաճառականները ապրանքացանկի շատ կարևոր տեսակներ էին տեղափոխում Եվրոպա և զգալի տեղ էին գրավել մանավանդ իտալական քաղաքների հետ ունեցած առևտրում։ 1576 թ. Վենետիկի սենատը զեղչել էր ցամաքով բերված մետաքսի մաքսը, իսկ 1589 թ. որոշմամբ թեթևացնում կամ անմաքս էր դարձնում Պարսկաստանից ներմուծված մետաքսը, որի զգալի մասը բաժին էր ընկնում Զմյուռնիայի նավահանգստին[10]։ Տոսկանայի դուքսը ևս 1591 թ. մի հրովարտակով առանձնաշնորհումներ էր տրամադրում հայերին՝ հրավիրելով նրանց բնակություն հաստատել Լիվոռնոյում։ 1646 թ. այստեղ հանգրվանած տասներկու հայ խոշոր վաճառականներից երեքը զմյուռնացիներ էին, որոնք թվական տեսակետից զիջում էին միայն կեսարացիներին[11]։ Լիվոռնոյում գործող վաճառականներից էր 1662 թ. Զմյուռնիայում սաղմոսարան գրչագրած Սուքիասը, որը ուշագրավ տողեր է թողել իր առևտրական դրամույթի

---

6 Ա. Սուրմեյան. Պատմություն Հալեպի հայոց. հ. Ա., Հալեպ, 1940, էջ 274։

7 L. Subhi. The era of Suleyman Magnificent. Crisis of orientation.—International Journal of Middle East studies. Vol. 10, 1979, p. 449.

8 M. Akdağ. Türkiyenin iktisadi ve ictimai tarihi, cilt II, Istanbul, 1974, S. 435.

9 Սիմեոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն. Վիեննա, 1936, էջ 37—38։

10 Ղ. Ալիշան. Սիսական. Վենետիկ, 1893, էջ 440։

11 Մ. Ուղուրլյան. Պատմություն հայոց գաղթականության և շինության եկեղեցվո նոցա ի Լիվոռնո քաղաքի. Վենետիկ, 1891, էջ 45, 50։

և հոգեշահ գործունեության մասին. «Աւարտեցաւ ի թուականիս Հայոց ՌՃԺԱ ամին և յունիսի ԻԱ, յաւուր շաբաթու ի քաղաքն Զմիռ ընդ հովանեաւ սուրբ Բարդուղիմեոսի եկեղեցուն և այլ կայր գիրքս այս ի ձեռին իմում ոչ կարէ աւարտել զի էի վաճառող ընչից. երթայի քաղաքէ ի քաղաք այլ երկիր որ կոչի Տալիա ի քաղաքս Լիկոռնայ, ի թագաւորութիւնն գրանդուկայ Ֆէրդինանդոս Մեդիչի...»[12]։

XVII դարում, հիրավի, զմյուռնահայերի թիվն ավելի էր մեծացել այդ քաղաքում։ 1663 թ. Ս. հավատո տարածման ժողովի քարտուղար Ալբերիչին նշում էր այդ իրողությունը, որ կատարվել էր «դոսկանական տէրութեան շնորհած արտոնութեանց պատճառաւ և վաճառականաց հետզհետէ հաճախելովն ի Լիվոռնո»[13]։

Լիվոռնոյում հայերը վաճառում էին Թուրքիայից բերած հումք, ինչպես և լեվանտի շուկաներում պահանջարկ վայելող ապրանքներ՝ շերամ, մուշկ, որդան կարմիր, բուստ, սաթ, մեղրամոմ, բրդեղեն, կտավ, կերպաս և այլն։ Այս հանգամանքը կարևոր է տեղի հայ վաճառականության հարատևությունը (մինչև XIX դարի կեսը և հետո) բացահայտելու տեսակետից, քանի որ պարսկական մետաքսի ներմուծումը բավականաչափ սպառվել էր արդեն XVIII դարի առաջին կեսից՝ աստիճանաբար ցրելով իտալական ու հոլանդական քաղաքներում մետաքսի առևտրից սնուցվող հայ առևտրականների կուտակումները։ Լիվոռնոյում հայ առևտրականության երկարակեցությունը բացատրվում է նաև հոլանդական բեռնաշրջանառության մեջ ունեցած նրա ակտիվ դերով, որի շնորհիվ նրանք իրացնում էին յուրատեսակ միջնորդություն հոլանդական նավատերերի և Լիվոռնոյի միջև։ Ա. Սյուրմելյանը գրում է, որ «նավային առևտրի նույն ոգևորությունը հունական կղզիներու և էգեյական ծովու նավահանգիստներու մեջ ալ ու հավանաբար հալեպցի կամ իզմիրցի վեց վաճառական հայեր՝ Սարհատ, Զաքրը, Հովհաննես, Մարկոս, Պետրոս և Հակոբ, 1627 նոյեմբերի 21-ին Ամստերդամի մեջ առևտրական դաշինք կկնքեն հոլանտացի Jan Steen-ի հետ, որով վերջինս, անշուշտ, նավատեր մը, Լիվոռնո պիտի փոխադրեր ապրանքներ»[14]։ XVIII դարում զմյուռնացիների գործունեությունը Լիվոռնոյում շարունակվում էր նույն ակտիվությամբ։ Այստեղ պահպանվել են զմյուռնացի վաճառականներ Ավետիք Ոսկանյանի (1770), Ապրո Չելեպիի (1713) և Ստեփան Նազարեթի (1720) տապանաքարերը[15]։

Զմյուռնահայ վաճառականները վաղեմի կապեր ունեին Վենետիկի հետ։ Այստեղ բնակվող այդ վաճառականներից, որոնք ապրել են XVII—XVIII դդ. և թողել երկուսից ավելի ճյուղ կամ սերունդ, Ղ. Ալիշանը հիշատակում է Մարտիրոսյանին (հինգերորդ սերունդ) և Ադամյանին (չորրորդ սերունդ)[16]։

Առևտրի փոփոխությունների հետևանքով կատարվում էր և հակառակը՝ Վենետիկի հայ վաճառականներն էին բնակություն հաստատում Զմյուռնիայում։ Այս իրողությամբ է մասամբ բացատրվում Եվրոպայում ապաստանած հայերի գաղթը Զմյուռնիա XVIII դարում։ Զմյուռնահայ վաճառական Շահումյան ընտանիքի մասին Ա. Այվազյանը նշում է, որ այն «Վենետիկեն եկած հին ընտանիք մըն է»[17]։ Հիրավի, Մեղրիի (կամ Ղափանի) վաճառական դասը, որը «հզոր էր իր միջազգային կուտակումներով»[18], XVII դարում և

---

12 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց (կազմ. Բ. Սարգիսյան). հ. Ա, Վենետիկ, 1914, էջ 349։

13 Մ. Ուղուրլյան. նշվ. աշխ., էջ 51։

14 Ա. Սյուրմելյան. նշվ. աշխ., էջ 614—615։

15 Մ. Ուղուրլյան. նշվ. աշխ., էջ 103—104։

16 Ղ. Ալիշան. Հայ—Վենետ. Վենետիկ, 1896, էջ 497։

17 Ա. Այվազյան. Հոնիական գաղութի նահապետներեն.—«Արևելք», 3 սեպտեմբերի 1900։

18 Լեո. Խոջայական կապիտալ. Երևան, 1934, էջ 283։

հետո առևտրական տներ էր հիմնել Վենետիկում, Կ. Պոլսում, Զմյուռնիայում և այլուր։ Շահումյանների տոհմը, որից, ի դեպ, սերում էր Դավիթ Բեկի զինակից Ստեփանոս Շահումյանը, Վենետիկում էր հաստատվել XVII դարի կեսին։ Ստեփանոս Շահումյանի հորեղբայրը՝ Սահակի որդի Ոսկանը, այստեղ «եկեալ և հաստատեալ էր ի տուն վաճառականութեան»[19]։ Շահումյանները, ինչպես և Վենետիկի մյուս հայ վաճառականները, ամբողջովին կապված էին լևանտական առևտրի հետ. Նրանք ներմուծում և արտահանում էին գյուղատնտեսական հումք, Դամասկոսի կերպաս, եվրոպական լայն սպառման առարկաներ, գործվածքեղեն, ապակի և այլն։ 1757 թ. այդ առևտրական տունը սնանկացավ շուրջ հարյուրամյա գործունեությունից հետո, մինչդեռ Զմյուռնիայի նրանց ազգակիցները շարունակում էին իրենց հաջողակ գործունեությունը։ 1781 թ. հունիսին Ղուկաս կաթողիկոսը ողջույն էր հղում իզմիրցի պարոն Հակոբ Շահումյանին[20], որը պետք է ստորագրեր Դավիթ կաթողիկոսին 1803 թ. ուղղված հավատարմագրի ներքո։

Զմյուռնիայում և Վենետիկում հաստատված մեղրեցի (ղափանցի) վաճառականներից էին Պապղուլյանցները։ 1791 թ. Ղուկաս Կարնեցին զբաղվում էր զմյուռնաբնակ վաճառական Հ. Պապղուլյանցի ժառանգության գործով և տեղեկացել էր, որ Մեղրիում է բնակվում նրա ազգականը։ Կաթողիկոսը խնդրել էր Զմյուռնիայի առաջնորդ Իսահակ վարդապետին՝ բավարարելու ժառանգորդի օրինական պահանջները[21]։ Ուշագրավ է, որ Վենետիկի Ս. Խաչ եկեղեցու դիվանում հիշվում է Ոսկան, որդի Պապղուլի վաճառականը (1677—1730 թթ. գրագրություններում)[22]։ 1718 թ. Վենետիկում բնակվում էին տաս մեղրեցի վաճառականներ, որոնք առևտրական կապեր ունեին Զմյուռնիայի հետ[23]։

XVIII դարի սկզբներին արդեն նկատելի էր դարձել Վենետիկի առևտրի անկումը թուրքական նավահանգիստներում։ Կ. Պոլսում ռուսական դեսպան Ա. Տոլստոյը նշում էր Վենետիկից ներմուծվող ոսկեկար և մետաքսե դիպակների բարձր պահանջարկը թուրքական ավագանու մեջ, սակայն արձանագրում էր Թուրքիայում վենետիկցի վաճառականների սակավությունը[24]։ Մի քանի տասնամյակ անց թեև պատկերը փոխվում է, և քաղաքում աշխուժանում է վենետիկցիների փոքրաթիվ համայնքը, սակայն, ինչպես վկայում էր Ա. Ի. Նեպլյուևը[25], վենետիկյան առևտուրը կորցրել էր իր ծավալները։

Զմյուռնաբնակ հույն, հրեա և հայ վաճառականությունը XVIII դարի առաջին քառորդին զգալիորեն կրճատել էր առևտուրը Վենետիկի հետ։ Կրճատվել էր մետաքսի, անգորական բրդի, հումքի այլ տեսակների արտահանումը։ Առևտրի այսպիսի անկումը կապվում էր Վենետիկի հետ Թուրքիայի հարաբերությունների սրման, ինչպես և լևանտի առևտրում անգլիական ու ֆրանսիական առևտրի հաշվեկշռի ընդլայնման հետ։ Վենետիկի իշխանությունները հիվանդագին ընդունեցին Զմյուռնիայի հետ առևտրական կապերի նվազումը։ 1712 թ. սեպտեմբերին նրանք «թելադրեն ողոքել զհայս՝ զի մի դադարեսցին յառևարս վասն խակագործութեան ինչ զունցին Զմիւռնիոյ, զի ի նոցանէ կախեալ էր շահ առևտրի երկոցուն նաւահանգստաց (Զմյուռնիայի և Վենետիկի—Ա. Խ.)[26]։

19 Ղ. Ալիշան. Սիսական. Վենետիկ, 1893, էջ 300։

20 Դիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք 1, Ղուկաս կաթողիկոս Կարնեցի (աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի). Հ. Ա, Երևան, 1984, էջ 248։

21 Դիվան հայոց պատմության. գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 566, 603, 606։

22 Ղ. Ալիշան. Նշվ. աշխ., էջ 304—305։

23 Ս. Արամյան. Դավիթ Բեկ կամ «Պատմութիւն ղափանցւոց». Վենետիկ, 1978, էջ 115—116։

24 Русский посол в Стамбуле. М., 1985, с. 97.

25 Б. М. Данциг. Русские путешественники на Ближнем Востоке. М., 1965, с. 80.

26 Ղ. Ալիշան. Նշվ. աշխ., էջ 448։

Հիրավի, մեկ տասնամյակ անց Վենետիկի հյուպատոսը զուր ջանքեր էր գործադրում Թուրքիայի հետ իր հանրապետության քաղաքական ու առևտրական հարաբերությունների վատթարացումը կանխելու համար։ Բանը հասավ այնտեղ, որ վենետիկյան նավերը հարկադրված էին ընթանալ Ֆրանսիական դրոշակով, որ առաջ էր բերել վենետիկյան ներկայացուցչի բողոքը[27]։

Զմյուռնահայ վաճառականները սերտ կապեր ունեին հոլանդական առևտրական կենտրոնների հետ, որին մի հայտնի չափով նպաստել էր հոլանդական նավաշինության զարգացումը։ Հոլանդիայի հյուսիսային գավառներում առևտրական առաջատարի դեր ստանձնած Ամստերդամը ազատություններ էր շնորհել օտար առևտրականներին։ XVII դարում առանձնապես աշխույժ էին դարձել հոլանդական տնտեսական կապերը Զմյուռնիայի հետ[28], որ շարունակվեց նաև հաջորդ դարում։ Թուրքիայի և Հոլանդիայի միջև առևտրական դաշինք կնքվելուց հետո (1612) Զմյուռնիայում հաստատվեց հոլանդական հյուպատոսություն։ 1688 թ. Կ. Պոլսում նշանակվեց նիդերլանդական դեսպան, իսկ 1680 թ. Հոլանդիայի առևտրականներին տրվեցին նույնպիսի արտոնություններ, ինչպիսիք ունեին Անգլիան և Ֆրանսիան։ Հոլանդիայում հանգրվանած հայ առևտրականները փոքրասիական մետաքսն ու գյուղատնտեսական հումքը Հոլանդիա տեղափոխելուց հետո լևանտական առևտրի կենտրոններ էին տանում եվրոպական արտադրության արդյունքները։ 1626 թ. հետո Նոր Ջուղայի հայերը մշտական հաստատություն գտան Ամստերդամում՝ նրա հետ առևտրական կապեր ստեղծելով «առանց հոլանդացի, հրեա կամ այլ միջնորդների, հոլանդական շահերից օգտվելու համար թե՛ ներածությամբ և թե՛ արտածությամբ»[29]։ Զմյուռնահայ վաճառականները ևս գործուն մասնակցություն են բերել այս հարաբերություններին։ Շարդենը 1672 թ. նշում էր, որ վաղուց ի վեր Զմյուռնիայում ապրող հայերը գործնական կապեր ունեն հոլանդական առևտրական ընկերությունների հետ[30]։ Դրան նպաստում էր տարանցիկ առևտուրը ըստ ամենայնի խրախուսող հոլանդական կառավարության վարած ազատ առևտրի քաղաքականությունը։ Նույն կերպ, Անտվերպենում խրախուսվում էին արևելյան, այդ թվում և հայ վաճառականները, որոնք գործում էին անկախ, առանց ընկերությունների և այսպիսով դուրս էին մրցակցությունից և չէին կարող վնասել հոլանդական առևտրի շահերին[31]։ XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին հոլանդական նավերի բեռնաշրջանառության աճը լևանտում, Գլխավոր շտատների կողմից քաղաքական բարենպաստ հարաբերությունների պահպանումը Թուրքերի հետ նպաստում էին հոլանդական առևտրին[32]։ Այս ժամանակաշրջանում հոլանդական առևտուրը գրավում էր լևանտի շրջանառության 20—25 տոկոսը[33], որը նշանակալի որակ էր եվրոպական առևտրի հաշվեկշռում։

Արտաքին առևտրում առաջացած խոչընդոտների դեպքում, սակայն, հայ վաճառականները միավորվում էին և այս դեպքում նրանց կազմակերպվածությունը ի հայտ էր գալիս որպես քաղաքական հովանավորություն վայելող օտար վաճառականներին ընդդիմանալու արդյունավետ միջոց։ Ա. Սարուխանը մեջբերում է զմյուռնահայ վաճառականների բողոքագիրը (1658—1659 թթ.) Զմյուռնիայի հոլանդական հյուպատոս Մորտիերի դեմ՝ ուղղված Հոլանդիայի Գլխավոր շտատներին։ Հյուպատոսը կամայականորեն արգելել

M. Shay. The Ottoman empire from 1720 to 1734. Urbana· 1944, p. 64.

28 Э. Бааш. История экономического развития Голландии в XVI—XVIII вв. М., 1949, с. 310.

29 Ա. Սարուխան. Հոլանդիան և հայերը. Վիեննա, 1926, էջ 37։

30 «Հառաջ», 28 սեպտեմբերի 1972։

31 Э. Бааш. Указ. соч., с. 244.

32 Русский посол в Стамбуле, с. 92.

33 М. С. Мейер. К характеристике экономической жизни городов Османской империи в XVII веке.—В кн.: Проблемы генезиса капитализма. М., 1978, с. 246.

էր հայ վաճառականների ապրանքների բեռնումը հոլանդական նավեր՝ պահանջելով բարձրացնել վճարը. «Մենք ֆլամիկի նավին ժ-ին կէս անք տվել, չում այլ տա մին մոչ կէս բոպ աս ուզում»[34],— բողոքում էին նրանք։

Ինքնագլուխ հյուպատոսի դեմ բողոքեցին նաև իրենք՝ տեղի հոլանդական գաղութի առևտրականները, նշելով, որ նրա գործողությունները սպառնալիքի տակ են դնում հույների, հրեաների և հայերի կողմից իրենց նավերը վարձելու գործը։ Իսկապես, Զմյուռնիայի առևտրում խիստ ազդեցիկ այս երեք էթնիկական խմբերի կողմից հոլանդական նավերի վարձակալման ձախողումը ծանր հարված կարող էր հասցնել հոլանդական նավատերերին։ Այս էր պատճառը, որ 1660 թ. վերոհիշյալ հյուպատոսը հանվեց իր պաշտոնից։

Մինչև XVIII դարի վերջը և դրանից հետո էլ զգալի թվով զմյուռնահայ վաճառականներ էին բնակվում Հոլանդիայում։ Ամստերդամում գործող այս մեծահարուստ վաճառականների հետ Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսները մշտապես կապ էին պահպանում, նրանց նախապես տեղյակ պահում ազգային-կրոնական գործերում իրենց անելիքների մասին։ Այսպես, 1775 թ. Զմյուռնիայի առաջնորդ Ղուկասին (ապագա կաթողիկոս) Եսայի վարդապետով փոխարինելու իր որոշումը Սիմեոնը հայտնել էր Ամստերդամի վաճառականներին։ Նույն կերպ, Ամստերդամի «Հայազուն ժողովրդոյն» հատուկ կոնդակներ էր ուղարկում Ղուկաս կաթողիկոսը[35]։ XVIII դարի վերջին քառորդին Ամստերդամում առևտուր էին անում զմյուռնացի վաճառականներ Ա. Սավալանյանը, Ալ. Մասեհյանը, մեծահարուստ Մնացականը և ուրիշներ։ Առաջին երկուսը 1781 թ. Ամստերդամից Էջմիածին զանգակներ էին ուղարկել իրենց ծախքով[36]։ Վերոհիշյալ Ա. Սավալանյանը՝ զմյուռնաբնակ վաճառական Մոսկոֆ Հովհաննեսի եղբայրը, 2000 գուլդեն էր նվիրաբերել Էջմիածնի աթոռին, որի համար Ղուկաս կաթողիկոսը նրան օրհնության թուղթ էր ուղարկել 1783 թ. մարտին[37]։

Զմյուռնահայ վաճառականները Հոլանդիայից ներմուծում էին մահուդ, գործվածքեղեն, մետաղներ, իսկ Թուրքիայից արտահանում էին մետաքս, գյուղատնտեսական ապրանքներ։ Այս առևտրի մեջ էին ընդգրկված նաև Ամստերդամում բնակվող այլ հայ վաճառականներ՝ կեսարացիներ, նորջուղայեցիներ, ագուլեցիներ և այլն։ Ամստերդամի հայ համայնքը գոյատևեց մինչև XIX դարի սկիզբը, երբ նապոլեոնյան պատերազմների հետևանքով այդ քաղաքը դրկվեց իր ինքնուրույն առևտրական նշանակությունից[38]։

Զմյուռնիայում գործող հայ վաճառականության՝ տարանցիկ առևտրին մասնակցելու տնտեսական հիմքը Պարսկաստանի և Թուրքիայի գյուղատնտեսական հումքի արտադրությունն էր։ 1639 թ. Կասրե Շիրինի թուրք-պարսկական համաձայնագրից հետո տարանցիկ առևտրական ուղիներում սկսվեց հանդարտության շրջան։ Այն դրականորեն ազդեց ինչպես ներքին՝ փոքրասիական, այնպես էլ Կ. Պոլսի, Տրապիզոնի, Հալեպի, Զմյուռնիայի և միջերկրածովյան առևտրական ուղիների աշխուժացման վրա։ Սակայն Էգեյանի շրջանում դրությունը պետք է բարդանար Կանդիայի պատերազմի պատճառով, որը բավական վնաս հասցրեց արտաքին առևտրին։ Զմյուռնիա տանող քարավանային ուղիները դարձան անապահով, ուժեղացան հարստահարությունները։ Զմյուռնահայերի «վերատեսուչ» (առաջնորդ) Կիրակոս Թալինցու՝ 1651 թ. գրած մի հիշատակարանում ուրվագծվում է այդ իրավիճակը. «Ի յայսմ անդորրութեան միջոցի որ ծովով և ցամաքով պա-

---

34 Ա. Սարուխան. նշվ. աշխ., էջ 23։

35 Դիվան հայոց պատմության. գիրք Ը, Թիֆլիս, 1908, էջ 452—453. գիրք ԺԱ, Թիֆլիս, 1913, էջ 321։

36 Նույն տեղում, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 451։

37 Դիվան հայոց պատմության, Ղուկաս Կարնեցի. հ. Ա, էջ 352։

38 Ա. Սարուխան. նշվ. աշխ., էջ 62։

տեալ, պաշարեալ ազգն իսմայելացոց ունելով սաստիկ պատերազմ ընդ ազգին լատինացւոց որ և մեք ևս ունիմք նեղութիւն բազում եթէ ի հարկապահանջութենէ և ասպատակաւ որք ի հենից և աւազակաբար զրկողէ ոչ թէ միայն ի ճանապարհս որ վնաս են վաճառականաց, նաև մեր շրջողաց այլև ի քաղաքս և ի գիւղորայս բռնութեամբ վարին այլազգիք կողոպտելով, զրկելով, հարկանելով, սպանանելով, զկին և զտղայս քարշելով և ոչ յումեքէ երկնչելով»[39]։

Այսուհանդերձ, քարավանային ճանապարհը, անկախ իր խափանումներից, գործում էր, որի վկայությունը տալիս է Զաքարիա Ագուլեցու «Օրագրությունը»։ Իր ճանապարհորդությունների ընթացքում Զաքարիան անցել է նշված քարավանային ուղիներով մինչև Զմյուռնիա և ապա Եվրոպա։ Նա Ագուլիսից դուրս է եկել (առաջին անգամ) 1647 թ. մարտին՝ արձանագրելով. «Մին բեռն ապրիշիմով գնացի դերի Ըզմիր»[40]։ Ագուլեցի այս վաճառականի ուղին ժամանակի բանուկ անցումային գծերից մեկն էր, որն ընդգրկում էր Ագուլիս—Նախիջևան—Երևան—Էրզրում—Թոքատ—Զմյուռնիա քարավանային ճանապարհը։ Ագուլեցի վաճառականների այս ուղին Էրզրումում սովորաբար միանում էր Նոր Ջուղայի վաճառականների երթուղուն։ «Ես էլ,— հայտնում էր մի այլ վաճառական՝ խոջա Սաֆարը,— Սպահանա կարավանա հետ եկի Թարվէզ։ Տեղէն՝ Արզրում, Թոխաթ, մինչև Իզմիր»[41]։ Այս ուղին որոշ ընդհատումներով (պարսկա-թուրքական պատերազմների ժամանակ) բավական բանուկ էր նաև XVIII դարում և հաճախ շրջանցում էր Բրուսա—Էնկյուրի գիծը։ «Առանց Էնկյուրիեն և Պրուսայեն անցնելու,— գրում էր Տավերնիեն,— Թոքատեն ուղղակի Իզմիր ջորիով քսանը և հինգ օր է, իսկ ուղտով՝ քառասուն օր»[42]։ Ուշագրավ է, որ Զաքարիան անցել է նաև վերջին՝ Զմյուռնիա— Մանիսա—Բրուսա ցամաքային ճանապարհով, որը բանուկ էր դարձել դեռևս XIV—XV դդ.[43]։ Այս ուղիով էր իրականացվում նաև Էգեյանի շրջանի բամբակի և բամբակագործական արտադրանքի արտահանումը Եվրոպա (Բերգամայից, Դենիզլիից և այլն) և որը հումքի արտահանման կարևոր ուղի դարձավ XVIII դարում։

Բավական լայն շառավիղ ունի Զաքարիայի առաջին եվրոպական ուղևորությունը՝ Վենետիկ—Ամստերդամ—Լիվոռնո—Ջուստից—Կալիս—Մալիկա—Ալիկանտա—Լիվոռնո—Մեսինա—Զմյուռնիա երթուղով։ Ակնհայտորեն նկատելի է, որ իր գործառնություններով նա ամենից առաջ առնչվում է իտալական և հոլանդական առևտրական կենտրոններին, որոնց հետ սերտ կապեր ուներ նաև զմյուռնահայ վաճառականությունը XVII դարում։

Դեռևս առաջին ուղևորության ժամանակ Զաքարիան նշել է իր օրագրում. «Մեր աքուլաց շատ բազրկան կեր Իզմիր»[44]։ Հիրավի, դատելով ձեռագիր հիշատակարաններից, 1639 թ. հետո Զմյուռնիայում ստվարացել է Արևելյան Հայաստանից եկած վաճառականների թիվը, որոնց մեջ կային ջուղայեցիներ, ղափանցիներ, ագուլեցիներ, ղարաբաղցիներ և այլն։ Մարսելի, Ամստերդամի, Լիվոռնոյի և այլ կենտրոնների հետ առևտուր անող այդ վաճառականները մի վավերագրում իրենց կոչում են «փարսինախայ» (պարսկահայ) հավաքական անվամբ[45]։

Իրենց ազդեցությամբ ու հարստությամբ պարսկահայ վաճառականներից հետ չէին մնում Զմյուռնիայում դեռևս XVI դարում և հետո հաստատ-

---

39 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար. (1641—1660 թթ.) (կազմ. Վ. Հովհաննիսյան). Հ. Գ, Երևան, 1984, էջ 416—417։

40 Զաքարիա Ագուլեցու օրագրությունը. Երևան, 1938, էջ 71—72։

41 Հ. Տեր-Հովհանյան. Պատմություն Նոր Ջուղայու. Ջուղա, 1880, էջ 186։

42 Ա. Ալպոյաճյան. նշվ. աշխ., էջ 1263։

43 H. Inalcik, Op. cit., p. 124.

44 Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, էջ 160։

45 Ա. Սարուխան. նշվ. աշխ., էջ 20։

ված կեսարացի և եվդոկացի հայերը։ Սրանց մի մասը, ինչպես և արևելահայ վաճառականները, դարձան տեղաբնակներ՝ Զմյուռնիայում կառուցելով տներ, ձեռք բերելով ընդարձակ հողատարածություններ և այլն։ Ապրոյան նշանավոր գերդաստանից Մատթեոսի օրինակը, որը 1680-ական թթ. տուն էր կառուցել Զմյուռնիայում, եզակի չէր։ Երթևեկ հայ վաճառականների խմբերը, մինչդեռ, բնակվում էին նավահանգստին կից հյուրատանը (XVIII դար)։ Ա. Այվազյանը հիշատակում է «ծովեզերյա Տերվիշ օղլու խանը բնակող կեսարացի և եվդոկացի հարուստ հայերին, որոնք 1743 թ. նվիրատվություններ էին արել Զմյուռնիայի եկեղեցու վերակառուցման համար[46]։ Կեսարացի էին էֆիդյանները և Յուսուֆյանները. վերջիններիս մի շառավիղը XVIII դարի սկզբին տեղափոխվել էր Զմյուռնիա և փեսայացել Ապրոյաններին։ Մետաքսի փորբասիական առևտրում զբաղված վիրարնակ հայ առևտրականներից ևս հանգրվանում էին Զմյուռնիայում՝ մշտական բնակություն հաստատելով այնտեղ։ Տփղիսից եկած վաճառական էր 1716 թ. Զմյուռնիայում վախճանված Կուլիկենց Դավթի որդի Պապն, որի տոհմի անդամները հետագայում օգտվում էին արտատարածական ստատուսից[47]։ Զմյուռնացի հայերը ուղղակի կապ էին պահպանում Տփղիսի իրենց հայրենակից վաճառականների հետ։ 1776 թ. հունվարի 15-ի թվակիր մի վավերագրից պարզվում է, որ Տփղիս էր մեկնել զմյուռնարնակ վաճառական Եսայի աղան՝ այնտեղ բնակվող Թադայի որդի Մկրտումի հետ իր առևտրական վեճը կարգավորելու համար[48]։ Ամհասարակ Զմյուռնիայում հաստատված վաճառականները բավական հետքեր են թողել իրենց ներկայության մասին. 1644 թ. կեսարացի խոջա Մուրատ ռիհանլայի հետ միասին ճաշոց է նվիրել Զմյուռնիայի հայ եկեղեցուն[49], իսկ նույն եկեղեցու մի ձեռագրի հիշատակարանում (1662) հիշվում են կազմել տվող բարեգործները՝ վանեցի խոջա Ռուհիջանը և նրա հայր խոջա Ախիջանը[50]։ Մանիսայում գործում էին XVII դարի վերջին եկած դավանցի վաճառականներ, ինչպես երևում է Մանիսայի եկեղեցուն բուլերթցի խոջաներից անցած մի ավետարանի հիշատակարանից[51]։ Եկվոր այս վաճառականների մի կայուն խմբի համար Զմյուռնիան միանվագ գործառության կենտրոնից վերածվում է շարունակական գործունեության աստարեղի։ Ժամանակի ընթացքում այս վաճառականները կամ տեղաբնակ էին դառնում և կամ այնպես էին սերտաճում զմյուռնահայ համայնքի կյանքին, որ նկատելի ազդեցություն էին թողնում նրա ազգային-հասարակական իրականության վրա։

XVII դարում, սակայն, զգալի էր տեղաբնակ և եկվոր վաճառականների տարբերությունը առևտրի իրավական հարաբերությունների բնագավառում։ Այսպես, զմյուռնացի վաճառականներ «Obro և Ferpius George» դիմել էին Մարսելի իշխանություններին՝ առևտրական այնպիսի արտոնություններ ստանալու, ինչպիսիք ունեին պարսկահայ վաճառականները[52]։ Պետք է կարծել, որ գիմումը բավարարվել է, քանի որ ֆրանսիական կառավարությունը մինչև 1634 թ. խրախուսում էր պարսկական հումքի ներմուծումը և բարենպաստ պայմաններ էր ստեղծում տարանցիկ առևտրի համար, որը նպաստում էր իր թևթև արդյունաբերության զարգացմանը։ Նշված տարին միայն կառավարությունը շոշափելի սահմանափակումներ մտցրեց լեվանտից բերվող

46 Ա. Այվազյան. Շար հայ կենսագրությանց. Կ. Պոլիս, 1893, էջ 129։

47 Հ. Քոսյան. Հայր ի Զմյուռնիա. Վիեննա, 1899, հ. Ա., էջ 87։

48 ჭაოთელი ძამარიოლის ძეგლები, ტ. V, ობ., 1974, გვ. 15—16. Վավերագիրը արամարել է պատմաբան Վ. Մ. Մարտիրոսյանը, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալություն։

49 Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 6332, էջ 215—216։

50 Նույն տեղում, էջ 233։

51 «Արևելյան մամուլ», 1897, № 10, էջ 354։

52 Ա. Սարուխան. նշվ. աշխ., էջ 43։

մետաքսի առևտրի մեջ։ Մարսելում մեկ հակ մետաքսի դիմաց գանձվող մաքսը 16-ից հասավ 112 ֆրանկի, որը ֆրանսիական շուկայում ձեռնթափ արեց հայ վաճառականներին. մի որոշ ժամանակ նրանք ստիպված էին հրաժարվել Մարսելից և անմիջական կապեր հաստատել Հոլանդիայի և Անգլիայի հետ[53]։

Պետք է նկատել, որ ֆրանսիացի առևտրականները դրանից առաջ պայքարել էին երկրի ներսը թափանցող ապրանքների դեմ և կառավարությունից պահանջել էին իրավական համապատասխան միջոցառումներ։ 1632 թ. Մարսելի առևտրականները դիմել էին Լյուդովիկոս XIV-ին՝ հովանավորելու իրենց և խիստ միջոցներ ձեռնարկելու մաքսերից խուսափող և էժան գնով մետաքս վաճառող հայերի դեմ[54]։ Ակներև է, որ լեվանտի հետ կապված ֆրանսիական առևտրականները ի դեմս հայերի տեսնում էին իրենց լուրջ մրցակիցներին։ Գործում էր նաև ֆրանսիական կառավարության կողմից կիրառվող՝ երկրից ոսկին և արծաթը չհանելու և այդպիսիք ըստ հնարավորին դրսից բերելու մերկանտիլիստական քաղաքականությունը, իսկ հայ վաճառականների գործունեությունը գերազանցապես սահմանափակվում էր մետաքսի առևտրի շրջանակներում։

Ֆրանսիական կառավարությունը անսաց տեղական առևտրականների բողոքներին. հայերից գանձվող մաքսը շեշտակիորեն բարձրացվեց, որից հետո նրանք թողեցին Մարսելը։ Առևտրի այսպիսի սահմանափակումը, որ ուղղված էր ոչ միայն հայ վաճառականների դեմ, բացասական հետևանքներ պետք է թողներ Մարսելի առևտրական հաշվեկշռի վրա։ 1630—1680 թթ. այդ նավահանգստի 30 միլիոն լիվրի առևտուրը նվազեց հասավ 4 միլիոնի, իսկ տարեկան 1000 նավերի մուտքը՝ 30-ի։ Հետագայում, այդ վիճակը փոխելու ուղղությամբ Կոլբերի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հովանավորվեց նաև մետաքսի առևտուրը լեվանտի հետ, որի ուժով հայ վաճառականները վերահաստատվեցին Ֆրանսիայում[55]։ Խրախուսելով լեվանտական առևտուրը, Կոլբերն ընդլայնեց մտնավանդ մանուֆակտուրային արտադրանքի արտահանումը Թուրքիա՝ այնտեղից ներմուծվող ապրանքների խմբին հակադրելով մի շարք սպառունակ գաղութային ապրանքներ (սուրճ, շաքար, ինդիգո և այլն)[56]։

Սարուխանի հիշատակած վաճառական Օբրոն պետք է որ Ապրոյան գերդաստանից լիներ, թերևս, ինքը՝ Աբրահամ (Ապրո) Ապրոյանը, որը թեև 1660-ական թթ. Բելգրադից տեղափոխվել էր Կ. Պոլիս, սակայն դրանից շատ առաջ գործառնություններ ուներ Զմյուռնիայում[57]։ Ապրոյի որդի Մատթեոսը հոր մահից (1676) առաջ գտնվում էր Զմյուռնիայում[58], անշուշտ, առևտրական գործերի բերումով։ 1688 թ. երկրաշարժը այստեղ կործանեց նրա կա-

---

53 Ա. Գ. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք Բ, Երևան, 1959, է 183։

54 ՄՄ, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 240, 2, վավ. 6։

55 Նույն տեղում, վավ. 7։

56 J. Porter. Turkey. Vol. 1, London, 1854. p. 12.

57 Արր. Ապրոյանը Կանդիայի պատերազմի ժամանակ օսմանյան կայսերական բանակի մատակարարն էր. դրամական մեծ կարողության տեր այդ վաճառականը ֆինանսավորում էր օսմանյան վերնախավին։ 1673 թ. նոյեմբերի 29-ին նա ստացել է Կրետեի դեֆտերդար Ահմեդին տված իր պարտքը՝ 4700 ասլան ղուրուշ (Հ. Բարթիկյան. Նյութեր գաղութահայ պատմության.— «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, № 10, էջ 80)։ Ըստ Վ. Զարդարյանի, նա Կրետեում «եկեղեցի մը կառնե հայոց համար» (Վ. Զարդարյան. Հիշատակարան. Կահիրե, 1941, էջ 5)։ Ապրոյանի բարեգործության մասին է վկայում նաև Զմյուռնիայում անգլիական դեսպան Ռիկոտը (P. Rycaut. The history of the Turkish empire. London, MDCLXXX, p. 280).

58 Ն. Ակինյան. Երեմիա Չելեպի Քյոմյուրճյան. Վիեննա, 1933, էջ 246—250։

ոուցած տունը, զոհվեցին նրա մայրն ու որդիները, որ պատկերված է իր՝ Մատթեոսի հորինած «պատմական ոտանավորում»[59]։

Մատթեոսի գործունեության շրջանում էր, որ ֆրանսիական կառավարություն նշանակալի արտոնություններ ընձեռեց հայ առևտրականներին՝ երկրի նավահանգիստներում արևելյան առևտուրը աշխուժացնելու համար։ «Եւ ինքն զարձեալ,— գրում է Մատթեոսի մասին Ն. Ակինյանը,— մեծանուն վաճառականութեամբ և իշխանաւոր պատուով ընդունի ի Լուդովիկոս ԺԴ արքայէ գագդիացւոց թուղթ ազնուութեան և հովանաւորութեան 1687, որում ժամանեալ ելք հասարակաց կենաց մարդկան՝ հանգչի ի Քրիստոս թաղեալ ի մէջ սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ Զմիւռնոյս»[60]։

Լևանտում ֆրանսիական առևտրի աշխուժացման մասին է վկայում այն փաստը, որ XVII դարի երկրորդ կեսին Զմյուռնիայի ֆրանսիական հյուպատոսն ուներ երկու փոխհյուպատոսներ, որոնցից մեկը գտնվում էր Գուշա-Ատայում (Սկալանովա)[61]։ XVI—XVIII դդ. Թուրքիայի նավահանգստային քաղաքներում, այդ թվում և Զմյուռնիայում Բ. դռան և եվրոպական պետությունների արտաքին քաղաքական հարաբերությունները մի հայտնի չափով նույնանում էին արտաքին առևտրական հարաբերությունների հետ, ուստի և դիվանագիտական ներկայացուցչությունը հանդես էր գալիս որպես նաև առևտրական ներկայացուցչություն։

XVIII դարի երկրորդ կեսին զգալիորեն ծավալվեցին զմյուռնահայերի կապերը Տրիեստի հետ։ Դրանից անմիջապես առաջ եվրոպական առևտրական մագիստրալների փոփոխությունները, լևանտի առևտրում եվրոպական տերությունների բացարձակ գերիշխանությունը, ինչպես և Թուրքիայից արտասահմանյան շուկաները զուտ հումք արտահանելու իրողությունները զգալիորեն ազդեցին ընդհանրապես հայ առևտրականների գործունեության վրա։ Զմյուռնիայի և եվրոպական քաղաքների միջև երթևեկող ոչ քիչ թվով վաճառականներ, Թուրքիայի տրանզիտային դերի սահմանափակման հետ կապված, թողեցին եվրոպական բնակատեղիները և հաստատվեցին Զմյուռնիայում։ Այսպես նշում էր, որ այս ժամանակ գաղթօջախ են վերադարձել Վենետիկում, Ավստրիայում, Հոլանդիայում և այլ վայրերում բնակվող հայ վաճառականները, ընդսմին ցույց տալով քաղաքի հայ բնակչության թիվը՝ 12.000 մարդ[62]։ Նկատելի էր նաև հայ վաճառականության տեղաշարժը եվրոպական մի երկրից մյուսը։ 1769 թ. սեպտեմբերի 12-ին քահանա Հովհաննեսը հայտնում էր Վենետիկի Մխիթարյանների արքահայր Ստեփաննոսին, որ ավստրիական կայսրուհի Մարիա-Թերեզան արտոնություններ է տալիս հայերին՝ բնակվելու Տրիեստում. «Կայսերուհին ազատ կուցոյց զքաղաքն Դրիեսդէին վասն բազմամարդ առնելոյ զնա, այսպէս առ այս վախճան խորհեցաւ հաստատել ի Դրիեսդէ և զհայ քահանայ մի, զի գուցէ եթէ իցեն յազգէն հայոց որք կամիցին դալ և բնակիչ լինիլ ի Դրիեսդէ վասն պակասութեան բահանային մի արդելցին ի գալոյ»[63]։

Տրիեստում բնակություն հաստատած զմյուռնահայ վաճառականները այնտեղ գործել են բավական երկար ժամանակ, մինչև XIX դարի կեսը և հետո։ Տրիեստի մի «ծանուցմունք պսակաց» մատյանում (1798—1808) հիշվում է խաթուն Մարիամ Ռոզան, «դուստր իզմիրցի պարոն Յովհաննիսի Պետրոսի Զարարեան», որը 1806 թ. ամուսնացել էր մի վերոնացի իտալացու

---

59 ՄՄ, ձեռ. № 4515, էջ 560—563։

60 Ն. Ակինյան. նշվ. աշխ., էջ 252—253։ Ապրոյան գերդաստանի աղդարանությունը գրել է Զմյուռնիայի առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոսը՝ հասցնելով մինչև 1804 թ. (նույն տեղում, էջ 237)։

61 The six voyages of John Baptista Tavernier. London, 1678, p. 33.

62 Հ. Քոսյան. նշվ. աշխ., հ. Ա, էջ 33։

63 Ղ. Տայան. Մայր դիվան Մխիթարյանց ի Վենետկո ի ս. Ղազար, Վենետիկ, 1930, էջ 261։

հետ։ 1807 թ., դարձյալ իտալացու հետ, ամուսնացել էր զմյուռնացի Կարապետ Աստվածատրյանի դուստր խաթուն Բրիջիտան[64]։

Բոլորովին քիչ են ուսումնասիրված զմյուռնահայ վաճառականների հարաբերությունները Ռուսաստանի հետ։ Զմյուռնիայի վրայով առևտուր անող հայ վաճառականները Ռուսաստան էին մտնում ոչ միայն կասպիական-վոլգյան ուղիով, այլև Հոլանդիայով մտնելով Հյուսիսային ծովային ուղի և այնտեղից ափ իջնելով Արխանգելսկում։ Այսպես, XVII դարում վաճառական խոջա Սաֆարը Սպահանով անցել էր Թավրիզ, ապա Էրզրումի և Թոքատի վրայով՝ Զմյուռնիա։ Այնուհետև, նա անցել է Ամստերդամ, այնտեղից՝ ապրանք առնելու և Մոսկվա տանելու համար[65]։ Պետք է նշել, որ Պարսկաստանի վրայով անցնող ճանապարհը XVII—XVIII դդ. առավել քիչ էր մատչելի զմյուռնահայ վաճառականների համար, քան Հոլանդիայով և Շվեդիայով տանող ուղին։ Զմյուռնահայ վաճառականները շարունակում էին կապված մնալ դեպի արևմուտք տանող փոքրասիական ճանապարհներին, ինչպես իրենց հայրենակիցների մեծամասնությունը[66]։

Պետրոս Մեծի ժամանակ ռուսական կառավարությունը ջանքեր էր գործադրում ընդդիմանալու լեվանտական առևտուրը ամրապնդելու, ինչպես և Հնդկական օվկիանոսի առևտրական ուղիները ընդարձակելու եվրոպական երկրների քաղաքականությանը՝ ելնելով ռուսական առևտրի շահերից։ 1715 թ. Պարսկաստանում ռուսական դեսպան Ա. Վոլինսկուն տված հրահանգներում Պետրոսը ցանկալի էր համարում դիվանագիտական խոչընդոտներ հարուցելը Զմյուռնիայի և Հալեպի առևտրական ուղիների դեմ։ Ցարի կարծիքով դա նոր հնարավորություններ էր բանալու կասպիական—մերձվոլգյան առևտրի հետագա զարգացման համար[67]։ Ռուսական առևտրի մեջ հայերին ընդգրկելու ուղեգծի հետ են կապվում առևտրական այն արտոնությունները, որ տվել էր Պետրոսը զմյուռնահայ վաճառականներ Ապրոյան եղբայրներին (1717 թ. հունվարի 18-ին)[68]։ Այդ հրովարտակով Ապրոն, Աբրահամը և Ստեփանը օժտվում էին կայսրության մեջ «ամենուրեք ազատ և առանց խոչընդոտի» առևտուր անելու իրավունքով, որպիսին դրանից առաջ շնորհվել էր ջուղայահայ վաճառականներին։

Հայտնի չէ՝ Ապրոյանները արդյո՞ք օգտվել են ռուսական առևտրական մագիստրալներից։ Փաստն այն է, սակայն, որ թուրքական կառավարությունը հազիվ թե խրախուսեր նրանց մասնակցությունը ռուսական առևտրին։ Իր հերթին Պետրոսը հետաձգեց պարսկական մետաքսի առևտրի մերձեցման քաղաքականությունը՝ այն փոխարինելով մերձկասպյան նահանգները գրավելու պլանով։ Ի լրումն սրա, 1719 թ. նա չեղյալ հայտարարեց հայ վաճառականներին տրված բոլոր արտոնությունները[69]։ Երկու տարի անց, Պետրոսը դարձյալ պետք է կարևորություն տար առևտրական գործոնին. 1721 թ. փետրվարի 27-ին Կ. Պոլսում ռուսական ռեզիդենտ Կ. Նեպլյուևին նա կարգադրում էր Զմյուռնիայի, Հալեպի, Ալեքսանդրիայի և Դանուբի առևտրական ուղիներին լավատեղյակ վաճառականներին համոզել Ռուսաստանի միջով պարսկական մետաքսը Եվրոպա անցկացնելու գործակարության մեջ[70]։ 1723 թ. հուլիսին և սեպտեմբերին Պետրոսը վերականգնեց հայ վաճառականների արտոնությունները Ռուսաստանում, սա-

---

64 Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա. հ. Գ, Վիեննա, 1983, էջ 537։

65 Լ ե ո. Հայկական տպագրություն. հ. 1, Թիֆլիս, 1901, էջ 83։

66 Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сб. документов (под ред. А. Г. Иоаннисяна). Т. II, ч. I, Ереван, 1964, с. IX—X.

67 Նույն տեղում, էջ 93։

68 Նույն տեղում, էջ 105—107։

69 Նույն տեղում, էջ 169—172։

70 Նույն տեղում, էջ 172—173։

կայն Թուրքիայի, այդ թվում և Զմյուռնիայի հայ վաճառականները, որոնք այդ պետության տնտեսական ու քաղաքական շահախնդրությունների ուժով շարունակում էին կապված մնալ փոքրասիական ավանդական ուղիներին, այդպես էլ որևէ նշանակալի մասնակցություն չբերեցին ռուսական առևտրական հրապարակին։ Քիչ անց, պարսկական առևտրական ուղիներն արդեն ապահովության հույսեր չէին ներշնչում հայ վաճառականներին՝ թուրք-պարսկական պատերազմների, Պարսկաստանի ներքին անկայունության և միջֆեոդալական բախումների պատճառով։ 1730-ական թթ. Նադիր շահը արգելեց մետաքսի արտահանումը Թուրքիա, որը փաստորեն քայքայեց փոքրասիական ապրանքափոխանակության գործընթացը։ Դրան հակադրվելով՝ սուլթան Մահմուդն իր հերթին դիմեց համապատասխան գործողությունների։ Սիմեոն կաթողիկոսը նշում էր, որ հրապարակվել է «սուլթան Մահմուտի ֆարման վասն արևելցի վաճառականացն, որք ի յերկիրն օսմանցւոց ըլի մի պահանջեսցեն զհարկ ինչ ի նոցանէ ՌՃՂԱ թուին տաճկաց»[71]։ Ակներև է, որ պարսկական խափանող գործողություններին սուլթանը պատասխանում էր անմարս առևտրի առավելությամբ։ Այս հակամարտությունը հասցրեց նրան, որ 1740—1750-ական թթ. Պարսկաստանում աննախընթաց չափերով նվազեց մետաքսի առևտուրը։ Այստեղ գործառող վաճառականները տեղափոխվեցին Ռուսաստան, Եվրոպա, Թուրքիա, Հնդկաստան և այլուր։ Զմյուռնիան և Հալեպը դրա հետևանքով կորցրեցին մետաքսի շահութաբեր առևտուրը։ Աստիճանաբար մարեց XVIII դարի երկրորդ կեսին դեռևս գործող Սպահան—Թավրիզ—Կարին—Թոքատ—Զմյուռնիա ուղին[72]։

Մետաքսի առևտրի ամայացող ասպարեզից հեռացող հայ վաճառականների մի մասը տեղափոխվեց Զմյուռնիա կամ նրան կից շրջաններ և այս գործընթացը շարունակվել է հետագա տասնամյակներին։ Այս մասին ուշագրավ տեղեկություններ է տալիս Տ. Սավալանյանը. «Եվ որովհետև Իզմիրի հայերը,— գրում է նա,— առևտրական և ընտանեկան հարաբերություններ ունեին Ամսաերդամի ազգայնոց հետ և ամենքն ալ գրեթե Պարսկաստանեն գաղթած, այս պատճառներով Եսայեա որդիքն (Տ. Սավալանյանի պապը և նրա եղբայրները—Ա. Խ.) շուղելով իրենց բնակավայրն՝ Աշտարխան դասնալ, կորոշեն զալ բնակություն հաստատել Իզմիր (1770), որ, ինչպես հայտնի է, այն ժամանակ ևս Թուրքիո ամենեն ծաղկյալ և վաճառաշահ քաղաքն էր»[73]։

Ի դեպ, այս առնմից, դարձյալ Հովհաննես անվամբ մեկը, էգեյանի շրջան էր եկել շատ ավելի վաղ, XVIII դարի առաջին տասնամյակներից ոչ ուշ և բնակություն հաստատել էյգեմիշին կից Պիրկի ավանում, որտեղ էլ վախճանվել է 1716 թ.[74]։ 1743 թ. Զմյուռնիայում արդեն զգալի թիվ էին կազմում Պարսկաստանից տեղափոխված և ընդհանրապես եկվոր վաճառականները։ Ս. Սեմփոնիոս եկեղեցու նորոգման արձանագրության մեջ նշվում է, որ նորոգումը կատարվել է «արդեամբք և արօք առհասարակ ժողովրդոց յուսավորչածնից տեղացւոց և վաճառականաց եկաց և բնակաց»[75]։

XVII—XVIII դդ. պետք է առանձնացնել զմյուռնահայ վաճառականների գործունեության մի կարևոր բնագավառը՝ ակնավաճառությունը։ Ոմն ջուղայեցի Սարգիս XVII դարի առաջին քառորդին կամ դրանից քիչ անց վաճառական խոջա Ավետիքի հետ Հալեպից անցել է Զմյուռնիա և հաստատվել այնտեղ, իբրև ակնեղենի վաճառական[76]։ Դա այն Սարգիսն է, որը Այ-

[71] Սիմեոն կաթողիկոս. Ջամբռ գիրք. Վաղարշապատ, 1873, էջ 245։

[72] Հ. Քյուրտյան նշվ. աշխ., էջ 66։

[73] Տ. Հ. Սավալանյան. Կենսագրական հուշեր. Կահիրե, 1900, էջ 8։

[74] Նույն տեղում, էջ 10։

[75] Հ. Քոսյան. նշվ. աշխ., հ. Ա, էջ 58։

[76] Ա. Սյուրմեյան. Պատմություն Հալեպի քահանայից.— «Բազմավեպ», 1939, № 1—2, էջ 15։

տունում 1635 թ. ձեռնադրվել է քահանա՝ Տրդատ եպիսկոպոսի կողմից, ինչպես պարզվում է մի բժշկարանում նույն Սարգսի գրած հիշատակարանից[77]։ Զմյուռնիան ակնեղենի նշանավոր կենտրոն էր. Լյուդովիկոս XIV-ի բժիշկ Պ. Լուկան, որ XVIII դարի սկզբին այցելել էր Զմյուռնիա, հայտնում է, որ Կյուզել Հիսարում (Այտրն) «հայերը մեծ վաճառականություն կընեն մետաքսի և մանածի» և որ դրա հետ միասին «պեզեսթենին (շուկա—Ա. Խ.) մեջ ալ թանկագին քարերու և այլ արժեքավոր առարկաներու տուրևառ կըլլա»[78]։

XVII—XVIII դդ. զմյուռնահայ վաճառականները հրեա և հույն վաճառականության հետ միասին տիրապետող դիրք ունեին Այտրնի, Ալաշեհիրի, Մանիսայի և Էգեյանի առափնյա շրջաններում, բավարարելով նաև տեղական սպառողի պահանջարկը։ Օսմանյան և հպատակ ազգերի վերնախավերը հիմնականում սպառում էին եվրոպական գործվածքներ և կտավ, մինչդեռ ստորին խավերի մեջ լայն պահանջարկ ունեին առավել ցածրորակ և էժան տեղական բամբակե և բրդե գործվածքները։ Զմյուռնահայ վաճառականներ էքիզյանների մասին Թ. Ճերմակյանը գրում է, որ նրանք մասնակցել են եվրոպական կտավի ներմուծմանը, սակայն աչքաթող չեն արել նաև չքավոր սպառողին, «որը կգոհանար տեղական բամպակ կտավներով, որոնց այժմ Մենեմենի պեզ կամ բամպուք պեզի անունը կտրվի»[79]։ Հիրավի, քննարկվող ժամանակաշրջանում առևտրական հայեր էին հաստատվել Դենիզլիում, Նազիլիում, Մանիսայում, Գասապայում, Գրգաղաճում և այլուր, որոնք զբաղվում էին քաղաքներին և մյուս բնակավայրերին կից ավաններում մշակվող գյուղատնտեսական ապրանքների (խաղող, ցորեն, գարի, բամբակ, թուզ, սեխ, այլ բանջարանոցային կուլտուրաներ) վաճառքով։ Պետք է նկատել, որ Զմյուռնիային կից գավառական քաղաքների առևտրական հրապարակը գրեթե ամբողջովին ենթարկված էր Զմյուռնիայի շուկային, այնպես որ նշված վայրերում առևտրի ինքնուրույնության մասին կարելի է խոսել զուտ պայմանականորեն։ Տուրնըֆորը նկատում էր, որ Գուշատայում առևտուրը քիչ է զարգացած, քանի որ Զմյուռնիայի առևտրական հրապարակը ընդգրկում էր նաև տեղական առևտուրը[80]։ Դրանից շուրջ մեկ դար առաջ, 1614 թ. անգլիացի ճանապարհորդը նշում էր, որ Զմյուռնիայի տեղական շրջանների գյուղացիները օտարերկրացիներին էին վաճառում բամբակ, բուրդ, գինի՝ իրենց արտադրած արդյունքները[81]։ Ասվածը թույլ է տալիս նկատելու, որ Զմյուռնիայի մերձակայքի գյուղատնտեսական շրջանները ընդգրկված էին արտաքին առևտրի մեջ, որին գործոն մասնակցություն էին բերում նաև հայ առևտրականները։ Սրանք գործում էին Զմյուռնիա—Մանիսա—Բերգամա կամ Զմյուռնիայից հարավ ձգվող առափնյա միջանցիկ ուղիներով՝ Այտրնի ուղղությամբ։

Էգեյանի առափնյա տարածքների և ընդհանրապես փոքրասիական շրջանների գյուղատնտեսական արդյունքներն էին, որ առաջնակարգ նշանակություն պետք է ստանային զմյուռնահայ վաճառականների գործառնություններում՝ XVIII դարի երկրորդ կեսին պարսկական մետաքսի առևտրի անկումից հետո։ Ընդլայնվեց, մասնավորապես, բամբակի առևտուրը։ Զմյուռնիայի առևտրականությունը, գրում է Ինճիճյանը,— «Ամեն տարի 40 հազար բեռ (պալեա) բամպակ Ֆրենկիստան կխրկեր, 20 հազար բեռ ալ բամպրկև մանած կխրկեր։ Սա բեռները քովի գեղերեն Իզմիր բերելու, Իզմիրեն ալ ծովեզերքը տանելու մեծայն ճամբու խարճ՝ 1786 որ տարին որ մենք Իզմիր գտնվեցանք, շարաթ կըլլար, որ 300—500 քսան կխարճեն վա-

77 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621—1640 թթ.), կազմ. Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան. հ. Բ, Երևան, 1975, էջ 596։

78 «Բյուզանդիոն», 24 դեկտեմբերի 1909։

79 «Արշալույս», 1 մայիսի 1908։

80 J. P. Tournefort. Voyage d'un botaniste. II, Paris, 1982, p. 328.

81 Hakluytus Posthomus or Purchas his pilgrimes. Glasgow, 1905, p. 475.

առականները, բայց այսչափ բամպակին դեմ Ֆրանկիստան իր ձեռագործները բերելն զատ՝ նավերով նաղտ ըստակ ալ կխրկեր վճարելու համար[82], Թուրքիան տնտեսապես ավելի մեծ չափերով կախման մեջ ընկավ եվրոպական տերություններից. երկրի հումքը դուրս էր հոսում արտասահման՝ պահանջարկ չգտնելով տեղական անզարգացած արտադրության կողմից։ Տեղական տնայնագործական արտադրությունը զուրկ էր մնում պետական խրախուսանքից. իսկ եվրոպական անհամեմատ էժան և որակյալ ապրանքները այդ արտադրությունը դամում էին իր ավանդական մակարդակին։ XVIII դարում, ինչպես և նախորդ դարերում, Թուրքիայում առևտուրը շարունակում էր իր մեկուսի գոյությունը արտադրությունից։ Բամբակի մշակության էգեյանի վայրերը՝ Մանիսա, Բերգամա, Այտին, Թիրե, Դենիզլի և այլն, դարձան բամբակի արտահանության կենտրոններ։ 1740 թ. ֆրանսիական առևտրականներին տրվեցին նոր արտոնություններ, սահմանվեց մաքսի ցածր չափ՝ 3 տոկոս, այն դեպքում, երբ Թուրքիայի առևտրականները վճարում էին 10 տոկոսի չափով։ Նույնանման իրավունքներ ստացան Անգլիան և Հոլանդիան[83]։ Հալեպի ե Կ. Պոլսի հետ մեկտեղ անգլիացիները առևտրական ֆակտորիաներ հիմնեցին նաև Զմյուռնիայում՝ համախմբելով անգլիացի գործարարներին[84]։ Զմյուռնահայ առևտրական կապիտալը մեծ դժվարությամբ էր դիմանում այսպիսի կազմակերպված մրցակցությանը։ Բամբակի հետ միասին նրանց ապրանքացանկում նկատելի տեղ գրավեցին չոր մրգերը, խաղողը, թուզը, չամիչը, դինին, նարինջը, ձիթապտուղը և այլն։ Այս և մանավանդ բարձրորակ ծխախոտի արտահանման բնագավառում կարևոր դեր ունեին Զմյուռնիայի հույն վաճառականները, և առհասարակ, Զմյուռնիան և Էգեյանի շրջակայքը մի հայտնի չափով կրում էին հունական առևտրական բուրժուազիայի անտեսական ազդեցությունը[85]։

Այս ժամանակաշրջանում հայ վաճառականները Եվրոպայից ներմուծում էին կերպասի բազմազան տեսակներ, հախճապակի իրեր, հագուստ և այլն[86]։ Սակայն միայն բամբակագործության զարգացումն էր, որ առևտուրը խթանելուց զատ, նպաստում էր տեղական ապրանքաշրջանական հարաբերությունների աշխուժացմանը։ 1740-ական թթ. զարգացում էր ստացել նաև գորգերի տնայնագործական արտադրությունն ու առևտուրը. Ա. Ի. Նեպլյուևը արձանագրում էր Զմյուռնիայում ոլորաթելի գորգերի բարձր որակը[87]։ Տեղական արտադրության զարգացման միտումների մասին է վկայում 1790 թ. Զմյուռնիայում բատիստի գործարանի հիմնադրումը հայ վաճառականների կողմից[88]։ Ի տարբերություն Կ. Պոլսի, Ադրիանուպոլսի, Սալոնիկի և այլ քաղաքների մանուֆակտուրաների, որոնք ենթարկվում էին պետական վերահսկողության, զմյուռնացի վաճառականների այս առևտրաարտադրական ձեռնարկումը, թեկուզ և աննշմար չափերով, ներկայացնում էր առևտրի անցումը դեպի արտադրություն, որ բացառիկ երևույթ էր ժամանակի Թուրքիայի տնտեսական կյանքում։

Այսպիսով, XVII—XVIII դդ. զմյուռնահայ առևտրական բուրժուազիան և ընդհանրապես այդ նավահանգստում գործառող հայ վաճառականությունը խոշոր ներդրում ունեցավ արևելքի և արևմուտքի առևտրում։ Եվրոպայի, ինչպես և Թուրքիայի տնտեսական տեղաշարժերի տեսակետից հայ վաճառականությունը հույն և հրեա վաճառականության հետ միասին կատարել է

---

82 Ղ. Ինճիճյան. Դարապատում, 1750—1757, Վենետիկ, 1824, էջ 232։

83 А. Л. Новичев. История Турции. Т. I, ч. I, Л., 1963, с. 212.

84 J. Hanwey. An historical account of the British trade over the Caspean sec. Vol. I, Dublin. 1740, p. 386.

85 M. Houseprian. The destruction of a city. London, 1972, p. 29—30.

86 Հ. Քոսյան. Նշվ. աշխ., հ. Ա, էջ 22։

87 Б. М. Данцит. Указ. соч., с. 79.

88 Դիվան հայոց պատմության, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 572—573, 575։

առաջադիմական լուրջ դեր՝ բավարարելով հումքի նկատմամբ եվրոպական արտադրության պահանջարկը և ըստ հնարավորին խթանելով գյուղատնտեսական արտադրության զարգացումը Թուրքիայում։ Զմյուռնիայում գործառել են ոչ միայն տեղարնակ, այլև Եվրոպայում, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում և այլուր գործող հայ վաճառականները։ Այս առումով զմյուռնահայ վաճառականության հասկացությունը ստանում է շատ ավելի լայն իմաստ՝ սերտաճելով առհասարակ Զմյուռնիայում տևականորեն գործող հայ վաճառականության հետ։ Կարծում ենք, որ հայ առևտրականության այս խոշոր տարանցիկ հանգրվանի միջազգային բազմաթիվ կապերով, ինչպես և ընաշխարհի հետ ունեցած անմիջական առնչություններով է բացատրվում զմյուռնահայ գաղթօջախի հույժ կարևոր դերը հայ մշակույթի զարգացման մեջ։ Չնայած իր բնակչության համեմատաբար փոքր քանակին (XVII—XVIII դդ. Զմյուռնիայում ամենաբարձր ցուցանիշը եղել է 12 000 մարդ), գաղթօջախը XVII—XIX դդ. և ընդհուպ մինչև իր գոյության ողբերգական վախճանը (1922) ծանրակշիռ ներդրում արեց ազգային հոգևոր արժեքների զարգացման գործում։

АРМЯНСКОЕ КУПЕЧЕСТВО СМИРНЫ В МЕЖДУНАРОДНОЙ ТОРГОВЛЕ (XVII—XVIII вв.)

Доктор ист. наук А. А. ХАРАТЯН

Резюме

Обосновавшись в малоазийских портах, в том числе и в Смирне, армянское купечество было вовлечено в торговлю Леванта еще с XIII в. Армянские купцы достигали района Эгейского моря из самых различных частей Армении, Персии и Турции, перевозя сырье и товары кустарного производства. С формированием армянской колонии в Смирне (последняя четверть XIV в.), этот порт становится важным центром транзитной торговли не только для местных, но и приезжих армянских купцов. В XVII—XVIII вв. они вели через Смирну живую торговлю с Венецией, Ливорно, Амстердамом, Марселем, Триестом и другими европейскими торгово-промышленными центрами. Наряду с греческими и еврейскими купцами армянское купечество Смирны сыграло важную роль в обмене малоазийского шелка и хлопкового сырья на европейские промышленные товары.